ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող, Պետրոսյան փողոցին հարող չանվանակոչված փողոցը, որն ամբողջությամբ ընդգրկում է Դավթաշեն 2-րդ թաղամասը, անվանակոչել հայ ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անվամբ՝ «քաղաք Երևան, Քրիստափոր Իվանյան փողոց»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստանի» խմբակցության անդամ՝ Արմենակ Դանիելյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քրիստափոր Իվանյանը ծնվել է 1920թ. դեկտեմբերի 20-ին Թիֆլիսում: 1940 թվականին ավարտել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանը: 1949 թվականին ավարտել է Մոսկվայի Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան և մասնակցել է Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանային ակադեմիայի բարձրագույն դասընթացներին: 1938-78-ին ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ-ում, մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին: 1941-1942 թթ. եղել է ԽՍՀՄ ԶՈՒ հրետանային գնդի շտաբի պետի խորհրդական, 1942-1943 թթ.՝ 195-րդ ականանետային գնդի, 1943-1944թթ.՝ 348-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու, ՈՒկրաինայի ռազմաճակատի 128-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար (մարտերով հասել է մինչև Չեխոսլովակիա):

1949-1952 թթ. եղել է հրետանային կորպուսի մարտական պատրաստության բաժնի պետ, 1952-1955 թթ.՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ զորախմբի 280-րդ գվարդիական կործանիչ հակատանկային գնդի, 1956-1958 թթ՝ Առանձին գվարդիական կործանիչ հակատանկային բրիգադի հրամանատար, 1958-1961 թթ.՝ Օդեսայի պետական համալսարանի ռազմագիտության ամբիոնի պետ, 1962-1968 թթ.՝ Օդեսայի զինվորական օկրուգի 52-րդ հրաձգային բրիգադի հրամանատար, 1968-1973 թթ.՝ նույն օկրուգի 14-րդ բանակի հրթիռային զորքերի և հրետանու պետ, 1973-1978 թթ.՝ Անդրբայկալյան զինվորական օկրուգի հրթիռային զորքերի և հրետանու հրամանատարի տեղակալ: 1992-97-ին եղել է ԼՂ պաշտպանության կոմիտեի նախագահի խորհրդական, ապա՝ ՊԲ հրամանատարի 1-ին տեղակալ, զորամիավորման հրամանատար, ապա՝ տեղակալ: Զգալի ավանդ ունի ԼՂՀ բանակային կառույցների ու ծառայությունների, հատկապես հրետանու կազմավորման, ուսումնական զորամասերի, կենտրոնների, հրաձգարանների և փորձադաշտերի ստեղծման աշխատանքներին: Ղեկավարել է հակառակորդի մի շարք կրակակետերի (Ստեփանակերտի հարակից շրջանների, Մարտունիի և այլն) ճնշման ռազմական գործողությունները:

Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Սուվորովի 3-րդ աստիճանի, «Ոսկե արծիվ» և ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով: Իվանյանի անունով է կոչվել Ստեփանակերտի ռազմական ուսումնարանը և Ասկերանի շրջանի Խոջալու գյուղը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ.-ի N 2387 Ն որոշման 16-րդ կետը, առաջարկվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող, Պետրոսյան փողոցին հարող չանվանակոչված փողոցը, որն ամբողջությամբ ընդգրկում է Դավթաշեն 2-րդ թաղամասը, անվանակոչել հայ ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անվամբ՝ «քաղաք Երևան, Քրիստափոր Իվանյան փողոց»:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստանի» խմբակցության անդամ՝ Արմենակ Դանիելյան

Քարտեզագրական տվյալներ © 2024 200 մ